

Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ը Խրախճանք-Պարահանդէսով Կը Նշէ Հայաստանի Վերանկախացման 14ամեակը

23 Սեպտեմբեր 2005
Երուսաղէմ

Ուրբաթ, 23 Սեպտեմբեր 2005ի երեկոյեան ժամը Ցին Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի սրահէն ներս տեղի ունեցաւ Հայաստանի վերանկախացման 14ամեակի առթիւ նուիրուած խրախճանք-պարահանդէս կազմակերպութեամբը Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան:

Խրախճանքին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Պատույ Հիւպատոս ի Իսրայէլ Տիար Յուլակ Մումճեան, Պիրզէթի համալսարանի Իսլամական Պատմութեան դասախօս Տօթթ. Ալպէր Աղազարեան, Բեթղեհէմ համալսարանի փոխ տնօրէն Տօթթ. Մանուէլ Հասէսեան, ինչպէս նաեւ գաղութի այլ կարեւոր դէմքեր ինչպիսին Տօթթ. Անուշ Նազգաշեան եւ Պրն. Գէորգ Հինդիլեան: Խրախճանքին իրենց ներկայութիւնը բերած էին նաեւ ատլիքան 120 անդամներ թէ համակիրներ:



Խրախճանքի ներկայ հիւրերէն՝ դիմացը նստած, ծախէն աջ՝ Պրն. Գ. Հինդիլեան, Տօթթ. Ալպէր Աղազարեան, Հ.Հ. Պատույ Հիւպատոս Տիար Մումճեան, եղբ. Մարտո Նալպանտեան եւ եղբ. Վահան Օհաննէսեան:

«Մեր Հայրենիք»ի երգեցողութենէ եւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Սերոբ Սահակեանի բացման խօսքէ ետք, ուր ան անդրադարձաւ Մայիս 28ի առաջին Հայկական հանրապետութեան հռչակման կարեւորութեան փաստի շուրջ որը դարձաւ ներկայ Հայաստանի հիմքը ու գայն զօրացնող փաստը, բեմը տրուեցաւ գաղութի ծանօթ երգիչ եւ միութեան անդամ եղբ. Վարօ ՏԷմիրճեանի, որը Հայկական թէ Միջին Արեւելեան երգերով ու մեղեդիներով ճոխացուց խրախճանքը մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը:

Մասնաճիղիս անդամ եղբայր Օհան եւ Զարուհի Տէմիրճեան նորապսակ ամուլը որոնք իրենց ընտանեկան պարագաներով ներկայ գտնուեցան խրախճանքին, իրենց ամուսնութեան ուրախ առթիւ վարչութեան շնորհաւորութեանց միատեղ կտրեցին իրենց համար ի մասնաւորի տրամադրուած կարկանդակը:

Սակայն անկասկած իրիկուան ընթացքին մասնաւոր ուշադրութիւն ստացաւ զոյգի մը տոմսակի վիճակահանութիւնը դէպի Յունաստան նուիրուած միութեան համակիր Պրն. Փիրայր Սեւզադեանի կողմէ որը բախտաւորութիւնը եղաւ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Մէրին Վանայաններու Եաֆայէն:



Խրախճանքի ներկաներէն մաս մը:

Վիճակահանութենէ ետք մասնաճիղի ատենապետը կատարեց ընթերցումը խրախճանքի առթիւ վարչութեան ստացած նուիրատութեանց ցանկի, որոնց յայտնեց վարչութեան խորհին շնորհակալական թէ երախտագիտական զգացումները: Նուիրատուներն էին.-

- | | |
|---|--------------|
| 1. Եղբ. Վահան Օհաննէսեան | \$350 |
| 2. Տիար Յուլակ Մոմճեան Պատույ Հիւպատոս Հայաստանի Հանրապետութեան ի Իսրայէլ | \$200 |
| 3. Եղբ. Մարտո Նալպանտեան | \$100 |
| 4. Եղբ. Օհան Նաճարեան | \$100 |
| 5. Եղբ. Օհան Տէմիրճեան | 1000 ԻՆՇ |
| 6. Եղբ. Ծորճ Կիլէքճեան | 400 ԻՆՇ |
| 7. Տօքթ. Անոյշ Նագաշեան | 200 ԻՆՇ |
| 8. Եղբ. Մովսէս Այնթապեան | 200 ԻՆՇ |
| 9. Սանտրունի եղբայրներ | Վիճակ. նուէր |
| 10. Յակոբ Գալպճեան եւ ընտանիք | Վիճակ. նուէր |

Մէկ օր ետք, Ծաբաթ, 24 Սեպտեմբեր 2005ի երեկոյեան, Հ.Ե.Մ.ի սրահի մէջ տեղի ունեցաւ խրախճանք պարահանդէս նուիրուած Հայաստանի վերանկախացման 14ամեակին կազմակերպութեամբ Հ.Ե.Մ.իութեան վարչութեան: